

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՊՈՂՈՍՅԱՆ ՆԱՐԵԿ ՄԱՐԱՏԻ

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՌԱՖԱՅԵԼ ԼԵՄԿԻՆԻ ԿՈՂՄԻՑ**

**Է.00.05 «Պատմագրություն, աղբյուրագիտություն»
մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի
աստիճանի հայցման ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան - 2017

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր
Դեմոյան Հ.Ա.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Հայրունի Ա.Հ.
պատմական գիտությունների թեկնածու
Մաթոսյան Տ.Ս.

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2017 թ. հուլիսի 18-ին, ժամը 12⁰⁰-ին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ 0019, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղդամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017 թ. հունիսի 16-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Մուրադյան Հ. Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Ռաֆայել Լեմկինն իր ահռելի գիտական ժառանգության մեջ հատուկ տեղ է հատկացրել Հայոց ցեղասպանության իրագործման խնդրի ուսումնասիրությանը՝ այն պահելով ուշադրության կենտրոնում իր ողջ գործունեության ընթացքում:

Վերջին տասնամյակներում ժամանակակից բազմաթիվ հետազոտողների կողմից նորովի ուսումնասիրվում և վեր են հանվում Ռաֆայել Լեմկինի գիտական գործունեության նոր մանրամասներ՝ կենտրոնանալով նրա գործունեության այս կամ այն ուղղության վրա, սակայն մինչ այժմ հիմնավոր հետազոտության չեն ենթարկվել Լեմկինի՝ Հայոց ցեղասպանության վերաբերյալ ուսումնասիրությունների, հոդվածների, արխիվային նյութերի զգալի մասը:

Ցեղասպանագիտության մեջ թերևս ամենաճանաչված հեղինակներից մեկի՝ Ռաֆայել Լեմկինի դիտարկումները Հայոց ցեղասպանության վերաբերյալ բացառիկ նշանակություն ունեն միանգամից երկու դաշտում՝ Լեմկինի՝ որպես «Ցեղասպանություն» հասկացության խոշորագույն տեսաբանի, ժառանգության ամբողջական ուսումնասիրության համատեքստում, ապա նաև Հայոց ցեղասպանության՝ որպես ցեղասպանություն հանցագործության դասական մոդելի դիտարկման համատեքստում: Նշված իրողություններով պայմանավորված հրամայականով է բացատրվում թեմայի ուսումնասիրության արդիականությունը:

Մյուս կողմից Հայոց ցեղասպանության ժխտմամբ զբաղվող հեղինակները սկսել են մեծ ուշադրություն դարձնել Լեմկինի ժառանգությանը՝ բոլոր միջոցներով փորձելով Մեծ եղեռնի իրողությունը ոչ միայն «հեռացնել» Լեմկինի ժառանգությունից, այլ նաև ժխտել «ցեղասպանություն» հասկացության հետ դրա կապը:

Ատենախոսության թեմայի ընտրությունը պայմանավորված է Ռաֆայել Լեմկինի կողմից Հայոց ցեղասպանության խնդրի ուսումնասիրության համակողմանի հետազոտման և լուսաբանման անհրաժեշտությամբ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ և ԽՆԴԻՐՆԵՐԸ: Ատենախոսության հիմնական նպատակն է համակողմանիորեն ուսումնասիրել և վերլուծել Հայոց ցեղասպանության խնդրի նշանակությունը Ռաֆայել Լեմկինի գիտական գործունեության մեջ, ըստ այդմ՝ հետազոտության ընթացքում մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները.

- Բացահայտել Հայոց ցեղասպանության խնդրի շուրջ Ռաֆայել Լեմկինի հետաքրքրության շարժառիթները,
- Ի ցույց դնել Լեմկինի կողմից ցեղասպանություն հանցագործության իրականացման հեղինակներին պատժելու մեխանիզմների ստեղծման անհրաժեշտության գիտակցման և Հայոց ցեղասպանության կապը,

- Ներկայացնել Հայոց ցեղասպանության ազդեցությունը Ռաֆայել Լեմկինի կողմից «ցեղասպանություն» եզրույթի ստեղծման և հանցագործությունը բնորոշելու գործում,

- Ցույց տալ, որ Հայոց ցեղասպանությունը Լեմկինի կողմից դիտարկվել է որպես ցեղասպանություն հանցագործության բնութագրման և որակման մոդել,

- Վերհանել Լեմկինի մոտեցումները Հայոց ցեղասպանության և ընդհանուր առմամբ ցեղասպանությունների իրագործման անպատիժ թողնելու անթույլատրելիության մասին,

- Ներկայացնել «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին» 1948 թ. դեկտեմբերի 9-ի կոնվենցիայի կազմման, ընդունման և վավերացման անհրաժեշտության հարցում Հայոց ցեղասպանության վկայակոչումը Լեմկինի կողմից,

- Վերլուծել Լեմկինի և իր օգնականների հետազոտությունները Օսմանյան կայսրությունում հայերի ունեցած կարգավիճակի, նրանց պաշտպանության նպատակով օտարերկրյա միջամտությունների և հարցի շուրջ մեծ տերությունների ծավալվող հակասությունների, Հայոց ցեղասպանության իրագործման մեթոդների և դրդապատճառների, ինչպես նաև Գերմանիայի մեղսակցության հարցի վերաբերյալ,

- Ընդգծել Հայոց ցեղասպանության վերաբերյալ Լեմկինի հետազոտությունների կիրառական նշանակությունը և նրա գործունեության մասին ժխտողական հետազոտողների փաստարկների սնանկությունը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ:

Հայերեն լեզվով գիտական շրջանառության մեջ դնելով բազմաթիվ արխիվային նյութեր՝ այդ թվում նաև փաստաթղթեր և Լեմկինի անտիպ գրություններ, ուսումնասիրելով Հայոց ցեղասպանության խնդրին վերաբերող լեմկինյան հետազոտությունները, ինչպես նաև խորությամբ հետազոտելով և համադրելով խնդրո առարկա հիմնահարցի վերաբերյալ տարբեր գիտակարգերի շրջանակներում կատարված ուսումնասիրությունները՝ պարզաբանել ենք Հայոց ցեղասպանության խնդրի նշանակությունը ինչպես Լեմկինի գործունեության մեջ, այնպես էլ «ցեղասպանություն» հանցագործության կանխարգելման մեխանիզմների ստեղծման հարցում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ:

Հետազոտությունն ունի ինչպես գիտական, այնպես էլ գործնական-կիրառական նշանակություն: Աշխատանքը կարող է օգտակար լինել ոչ միայն պատմաբաններին և իրավագետներին, այլև քաղաքական գործիչներին, դիվանագետներին: Հետազոտությունը կիրառական մեծ նշանակություն կարող է ունենալ նաև Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի, ժխտողականության դեմ պայքարելու գործում: Ատենախոսության մեջ արծարծված դրույթները կարող են օգտագործվել պետական

համապատասխան մարմինների կողմից՝ քաղաքական մոտեցումների մշակման, ինչպես նաև վերլուծական նյութերի պատրաստման տեսանկյունից: Ատենախոսությունը կարող է նաև օգտակար լինել բուհերի ուսանողների և ցեղասպանագիտության բնագավառում գիտական հետազոտություն կատարող անձանց համար:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԸ: Աշխատանքը շարադրվել է գիտական անաչառության և անկողմնակալության սկզբունքի անշեղ կիրառմամբ: Պատմահամեմատական մեթոդի օգտագործումը թույլ է տվել հասկանալ պատմական այս կամ այն իրողությունը, երևույթի վերաբերյալ լեմկինյան ընկալումներն ու դիտարկումները: Այսինքն՝ զուգադրվել է կոնկրետ երևույթը կամ իրողությունը և դրա լեմկինյան ընկալումը, ինչն էլ օգնել է հասկանալու Լեմկինի հետազոտություններում Հայոց ցեղասպանության խնդրին տրվող յուրահատուկ նշանակությունը: Այս առումով առանձին ենթագլուխներում «օգնության է եկել» համեմատական ցեղասպանագիտության մեջ լայնորեն կիրառվող համեմատական ընդհանուր գիտական մեթոդը, որի շնորհիվ Հայոց ցեղասպանությունը զուգադրվել է այլ ցեղասպանությունների և կոտորածների հետ՝ ընդգծելով ընդհանրականն ու առանձնահատուկը:

Ատենախոսության մեջ պատմաքննական մեթոդի օգտագործմամբ ցույց է տրվել հիմնահարցի վերաբերյալ շրջանառության մեջ գտնվող կարծիքները, մոտեցումներն ու վերլուծությունները, ապա և քննության են առնվել դրանք: Դրան մեծապես օգնել են նաև աղբյուրների և նյութերի համադրման, քննական վերլուծության մոտեցումները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության բաժնում:

Ուսումնասիրության հիմնական խնդիրները լուսաբանվել են հեղինակի հրատարակած գիտական 7 հոդվածներում, հանրապետական գիտաժողովներում ներկայացված զեկուցումներում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՔԸ ԵՎ ՀԻՄՆԱԽՆԴԻԻ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ: Աշխատության համար աղբյուրագիտական հենք են ծառայել անտիպ արխիվային նյութերը, տպագիր սկզբնաղբյուրները, Ռաֆայել Լեմկինի հարցազրույցները, մամուլը, ժամանակակիցների հուշերը և համապատասխան գիտական գրականությունը:

Թեմայի գիտական ուսումնասիրության համար առաջնային նշանակություն ունեն Ռաֆայել Լեմկինի արխիվային անտիպ փաստաթղթերը: Ռ. Լեմկինի մահից հետո նրա անտիպ գիտական ժառանգությունը և բոլոր տեսակի փաստաթղթերը հիմնականում նվիրաբերվել են երեք արխիվների (կենտրոնների): Հայոց ցեղասպանության խնդրին նվիրված նրա ձեռագրերը

և տարբեր փաստաթղթերը գտնվում են Նյու Յորքում գործող Ամերիկայի հրեական պատմական ընկերակցության (ԱՀՊԸ, անգլ.՝ American Jewish Historical Society (AJHS)) արխիվում: Այստեղ պահվող նյութերից Լեմկինի երկու ձեռագրերը՝ «Հայերի կոտորածների մասին գրքաչափ ձեռագիրը»¹ և «Հայերի կոտորածների մասին համառոտ ձեռագիրը»², լինելով Մեծ եղեռնի վերաբերյալ Ռ. Լեմկինի գիտական վերլուծությունների ամենաէական արդյունքները, ատենախոսության համար ունեն աղբյուրագիտական բացառիկ նշանակություն: Սրանք այն ձեռագրերն են, որոնք հետազոտողը մտադիր էր ընդգրկել ցեղասպանությունների պատմությանը և գիտական վերլուծությանը նվիրվելիք իր ապագա «Ցեղասպանության պատմություն» աշխատության մեջ, ինչը, սակայն, նա չհասցրեց իրագործել: Ատենախոսությունը շարադրելիս ձեռքի տակ ունեցել ենք նաև վերոհիշյալ ձեռագրերից առաջինի՝ 2008 թ. կրճատումներով հրատարակված տեքստը³:

Հայոց ցեղասպանության խնդրի վերաբերյալ Լեմկինի նյութերից հարկ է առանձնացնել ԱՀՊԸ-ի հավաքածուի 7-րդ պահոցում պահվող հատկապես «Ցեղասպանության բնույթը»⁴ և «Ցեղասպանություն հանցագործությունը»⁵ անտիպ նյութերը, որոնցում, որպես «ցեղասպանություն» հանցագործության առանցքային օրինակ, իրավաբանը ներկայացնում է առանձին դրվագներ Հայոց ցեղասպանության իրագործումից:

«Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի ընդունման անհրաժեշտությունը Հայոց ցեղասպանության ու դրա անպատժելիության իրողությամբ փաստարկող լեմկինյան դիտարկումների վերլուծության համար օգտվել ենք հեղինակի ««Ցեղասպանություն (սոցիալական)»»⁶, «Ցեղասպանությունը կանխելու և դրա համար պատժի մասին կոնվենցիան»⁷, «Ցեղասպանության կոնվենցիայի անհրաժեշտության մասին»⁸, «Վերջ Կալ ցեղասպանությանն այժմ»⁹

¹ AJHS, P-154, Raphael Lemkin Collection, Box 8, folder 14, - *Turkish Massacre of Armenians - Book-Length Manuscript*.

² Նույն տեղում, Folder 15, - *Turkish Massacre of Armenians - Short Manuscript*.

³ Lemkin R., Raphael Lemkin's Dossier on the Armenian Genocide: Turkish Massacres of Armenians (Manuscript from Raphael Lemkin's Collection, American Jewish Historical Society), with a foreword by Michael J. Bazyler, Glendale, Center for Armenian Remembrance, 2008.

⁴ AJHS, Raphael Lemkin Collection, P-154, Box 7, Folder 2, *Nature of Genocide*, undated.

⁵ Նույն տեղում, Folder 3, *Le Crime de Genocide*, Janvier 22, 1949.

⁶ Նույն տեղում, *Le Genocide (Social)*, undated.

⁷ Նույն տեղում, Folder 3, *The Convention for the Prevention and Punishment of Genocide*, undated.

⁸ Նույն տեղում, Folder 2, P-154, *On the Need for a Genocide Convention*, undated.

⁹ Նույն տեղում, Folder 3, *Stop Genocide Now*, undated.

խորագրերով նյութերից: Լեմկինի հետազոտական նյութերի մեջ առանցքային տեղ է զբաղեցնում նրա Մադրիդյան զեկույցը¹⁰, որում նա առաջ էր քաշում «բարբարոսություն» և «վանդալիզմ» հանցագործությունների մասին իր առաջարկները, որոնց հիման վրա էլ հետագայում ստեղծվեց «ցեղասպանություն հանցագործություն» հասկացությունը:

Ատենախոսությունում օգտվել ենք նաև Լեմկինի հարցազրույցներից, որոնցից հիշատակության արժանի է նրա՝ 1947 թ. հունիսի 12-ի¹¹ և 1947 թ. դեկտեմբերի 23-ի¹² ՄԱԿ-ում ունեցած հարցազրույցները: Առաջինը կարևոր է «ցեղասպանություն» հանցագործության իրագործողներին պատժելու և հասցված վնասը հատուցելու անհրաժեշտության մասին Լեմկինի տեսակետը հասկանալու տեսանկյունից, իսկ երկրորդը՝ այդ հանցագործությունը պատժելու և կանխելու նպատակով ՄԱԿ-ի անդամ պետությունների միջև համապատասխան պայմանագրի ստորագրման անհրաժեշտության կարևորությունը փաստելու առումով: Հայոց ցեղասպանության խնդրի վերաբերյալ սկզբնաղբյուրների շարքին կարելի է դասել նաև ԱՀԴԸ-ի հավաքածուի 6-րդ պահոցի 2-րդ թղթապանակում պահվող հայտարարությունների սղագրերը և հուշագրությունները¹³, որոնք մեծ արժեք ունեն Հայոց ցեղասպանության խնդրի վերաբերյալ Լեմկինի մոտեցումները բացահայտելու տեսանկյունից:

ԱՀԴԸ-ի հավաքածուի բազմաթիվ արխիվային նյութեր՝ մասնավորապես 7-րդ պահոցի 5-րդ թղթապանակում, 9-րդ պահոցի 1-ին և 8-րդ թղթապանակում պահվող նյութերը վերաբերում են մարդասիրական միջամտություններին և փոքրամասնությունների՝ այդ թվում նաև հայերի պաշտպանության խնդրին¹⁴: 9-րդ պահոցի 2-րդ թղթապանակի¹⁵

¹⁰ *Special report at the 5th Conference for the Unification of Criminal Law in Madrid presented by M. Raphael Lemkin*, 1933 October, Madrid.

¹¹ **AJHS**, Raphael Lemkin Collection, P-154, Box 6, Folder 1, *Transcript of interview of Raphael Lemkin, First draft of transcript*, June 12, 1947.

¹² *United Nations Radio Interview with Mr. Raphael Lemkin*, 23 Dec 1947, (<http://webtv.un.org/meetings-events/watch/genocide-convention-interview-with-mr.-raphael-lemkin/2849232979001>).

¹³ **AJHS**, Raphael Lemkin Collection, P-154, Box 6, Folder 2, *The Truman Doctrine, the Marshall Plan, and the U.N. Action on Genocide*, March 29, 1948; Նույն տեղում, *The Genocide Convention Goes into Force Today*, January 12, 1951; Նույն տեղում, *The Law on Genocide before the U.S.A. Senate*, undated.

¹⁴ **AJHS**, Raphael Lemkin Collection, P-154, Box 7, Folder 5, *Foreign Intervention for Oppressed Minorities and Minority Protection Treaties Essays*, undated; Նույն տեղում, Box 9, Folder 1, *American Intervention for Oppressed Minorities and Minority Protection Treaties*, undated; Նույն տեղում, Folder 8, *Minority Protection Treaties and British Intervention*, undated.

գրառումներում ներառված են փաստեր ի պաշտպանություն Օսմանյան կայսրության տարածքում ապրող հայերի և ասորիների ԱՄՆ-ի, Բրիտանական կայսրության և այլ երկրների իրականացված միջամտությունների մասին: Այս թղթապանակի նյութերում ներկայացվում են նաև փաստեր Հայկական հարցի ասպարեզ իջնելու, Հայկական հարցի շուրջ մեծ տերությունների ծավալվող հակասությունների, Հայոց ցեղասպանության իրագործման մեթոդների և դրդապատճառների, ինչպես նաև Գերմանիայի մեղսակցության հարցի վերաբերյալ: Նշենք, որ 9-րդ պահոցում տեղ գտած հետազոտական գրառումները հիմնականում կատարվել են Լեմկինի ուսանող օգնականների կողմից, սակայն ենթադրվում է, որ Լեմկինը ևս մասնակցություն է ունեցել դրանց կազմմանը, քանի որ այդ գրառումներում նկատելի է նրա մոտեցումների ազդեցությունը: Հետազոտության շրջանակներում տեղեկություններ ենք քաղել նաև Լեմկինի նամակներից և այլ փաստաթղթերից¹⁵:

Լեմկինի կենսագրության և գիտական գործունեության մասին կարևոր տվյալներ են պարունակում ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի Ի. Չառնիի անվանական ֆոնդում պահվող նյութերը: Դրանցում ներկայացված են նրա գործունեության առանցքային դրվագները¹⁷:

Ուշագրավ փաստեր ենք առանձնացրել հեղինակի անտիպ *ինքնակենսագրությունից*, որը հեղինակը չհասցրեց իրապարակել, և տարիներ հետո միայն այն լույս տեսավ ցեղասպանագետ Դոնա Լի Ֆրիզի խմբագրությամբ¹⁸: Ինքնակենսագրականում տեսնում ենք, թե ինչպես վաղ տարիքում Հայոց ցեղասպանության դեպքերի անարգել իրագործման խնդրի շուրջ ի հայտ եկած անհանգստությունը նրա համար ճանապարհի հարթեց, որպեսզի նա որպես իր գործունեության հիմնական ուղղություն ընտրի ցեղասպանության կանխարգելման նպատակին ծառայող միջազգային նորմերի մշակման գործը:

Հիմնախնդրի գիտական ուսումնասիրության համար կարևոր

¹⁵ Նույն տեղում, Folder 2, *Armenians and Assyrians*, undated.

¹⁶ Նույն տեղում, Box 2, Folder 2, *Correspondence to Len Peterson*, August 9, 1949; Box 7, Folder 11, *Correspondence from E. Nowinski to Raphael Lemkin*, undated; Box 8, folder 12, *Tamerlane*, undated; Լեմկինի կողմից 1948թ. ՄԱԿ-ում կարդացած դասախոսությունը՝ (<http://unesdoc.unesco.org/images/0022/002269/226985eo.pdf>).

¹⁷ **ՋՏԹԻ**, Ի. Չառնիի անվանական ֆոնդ, No 2087: Նույն տեղում, No 2088:

¹⁸ **Lemkin R.**, *Totally Unofficial: The Autobiography of Raphael Lemkin*, ed. Donna-Lee Frieze, New Haven, 2013.

նշանակություն ունեն նաև ՄԱԿ-ի փաստաթղթերը¹⁹, ինչպես նաև Հայոց ցեղասպանությունը փաստարկող տպագրված փաստաթղթերի տարբեր ժողովածուները²⁰:

Առենախոսության մեջ քննարկվող տարբեր հիմնահարցերի պարզաբանման համար զգալիորեն օգտվել ենք նաև Ռաֆայել Լեմկինի դեռևս իր կենդանության օրոք տպագրված աշխատանքներից: Այստեղ, անշուշտ, կենտրոնական տեղ է զբաղեցնում 1944 թ. լույս տեսած «*Առանցքի տերությունների կառավարումը բռնազավթված Եվրոպայում*»²¹ հիմնարար աշխատությունը, որում ներկայացվում է նրա կողմից առաջ քաշված ցեղասպանության հայեցակարգը: Այս աշխատությունում ուրվագծվում է Հայոց ցեղասպանության ազդեցության արտացոլումը Լեմկինի առաջ քաշած դրույթներում՝ չնայած որ այս աշխատությունում Հայոց ցեղասպանության մասին չի հիշատակվում: Հայոց ցեղասպանության մասին նշվում է 1946 թ. «*American Scholar*» ամսագրում հրապարակված Լեմկինի «*Ցեղասպանություն*» վերնագրով գիտական հոդվածում²², որտեղ նա Հայոց ցեղասպանությունը ներկայացնում է որպես ցեղասպանություն հանցագործության իրականացման նախավերջին օրինակը: 1945 թ. հրապարակված «*Ցեղասպանություն՝ ժամանակակից հանցագործություն*»²³ հոդվածում Լեմկինը վերլուծում է ցեղասպանության իրագործման տեխնիկան: Փաստեր ենք ներկայացրել, նաև Լեմկինի՝ 1947 թ. հրապարակված «*Ցեղասպանությունը՝ որպես միջազգային հանցագործություն*» հոդվածից²⁴: Հայոց ցեղասպանության խնդրի վերաբերյալ

¹⁹ United Nations General Assembly Resolution 95 (1) of 11 December 1946, (<https://documents-dds-ny.un.org/doc/RESOLUTION/GEN/NR0/033/47/IMG/NR003347.pdf>), United Nations General Assembly Resolution 96 of 11 December 1946, (<https://documents-dds-ny.un.org/doc/RESOLUTION/GEN/NR0/033/47/IMG/NR003347.pdf>), Secretariat Draft First Draft of the Genocide Convention, Prepared by the UN Secretariat, May 1947 (UN Doc. E/447), (<http://www.preventgenocide.org/law/convention/drafts/>),

²⁰ **Քոչարյան Վ.**, *Հայոց ցեղասպանությունը միջազգային իրավական փաստաթղթերում*, Երևան, 2014; *Germany, Turkey, and Armenia: A Selection of Documentary Evidence Relating to the Armenian Atrocities From German and Other Sources*, London, 1917; **Gust W.** (ed.), *The Armenian Genocide: Evidence from the German Foreign Office Archives, 1915-1916*, New York, 2014.

²¹ **Lemkin R.**, *Axis Rule in Occupied Europe: Laws of Occupation - Analysis of Government - Proposals for Redress*, Washington, 1944.

²² **Lemkin R.**, "Genocide", *American Scholar*, Vol. 15, No. 2, 1946, pp. 227-230. (<http://www.preventgenocide.org/lemkin/americanscholar1946.htm>)

²³ **Lemkin R.**, "Genocide - A Modern Crime", *Free World*, Vol. 4, 1945, pp. 39- 43. (<http://www.preventgenocide.org/lemkin/freeworld1945.htm>).

²⁴ Տե՛ս **Lemkin R.**, "Genocide as a Crime under International Law", *American Journal of International Law*, 1947, vol. 41, No 1, p. 147-158, (<http://www.preventgenocide.org/lemkin/ASIL1947.htm>).

Լեմկինի դիրքորոշումը ամբողջապես բացահայտելու համար շատ կարևոր տեղ է զբաղեցրել 1959 թ. «Հայրենիք» շաբաթաթերթում տպագրված նրա գրախոսությունը²⁵ *Տրապիզոնի թեմի առաջնորդ, արքեպիսկոպոս Հովհաննես Նազլյանի հուշերի*²⁶ մասին, որում հիշյալ անձնավորության մոտեցումներին անդրադառնալուց զատ՝ նա ընդգծում է, որ հենց Հայոց ցեղասպանության իրագործումը ճանապարհի հարթեց ՄԱԿ-ի կողմից ցեղասպանության կոնվենցիայի ընդունման համար:

Լեմկինի կենսագրությանը և գիտական գործունեությանը վերաբերող տարբեր հարցերի պարզաբանման համար օգտվել ենք նաև եվրոպական և ամերիկյան հետազոտողներ Վիլյամ Կորեյի²⁷, Սամանտա Փաուերի²⁸, Ջոն Կուպերի²⁹ աշխատություններից, որոնք աչքի են ընկնում Լեմկինի գործունեության և գիտական ժառանգության բավական կարևոր ու հետաքրքիր վերլուծություններով: Վերոհիշյալ հեղինակներից Սամանտա Փաուերը, օրինակ, ով ՄԱԿ-ում ԱՄՆ-ի դեսպանն է եղել 2013-2017 թթ., հատուկ ընդգծում է Հայոց ցեղասպանության իրողության ունեցած առանձնակի ազդեցությունը Ռաֆայել Լեմկինի գործունեության վրա:

Արևմտյան հեղինակներից այդուհանդերձ առանձնանում են պրոֆեսոր Սթիվեն Լեոնարդ Ջեկոբսի՝ հետազոտությունները Լեմկինի գիտական գործունեության վերաբերյալ³⁰: Ջեկոբսի հետազոտությունների շարքում հարկ է առանձնացնել նրա «*Ռաֆայել Լեմկինը և Հայոց ցեղասպանությունը*» հոդվածը, որում քննարկվում է Լեմկինի գիտական հայացքների վրա Հայոց ցեղասպանության ունեցած ազդեցությունը, ինչպես նաև համառոտակի

²⁵ **Dr. Lemkin**, Father of genocide Convention, Reviews Work Relating to Turkish Massacres, Published in the Hairenik Weekly: Thursday January 1, 1959, Lemkin's Hairenik Weekly Article 50 Years Later: A Powerful Reminder, (<http://asbarez.com/59792/lemkins-hairenik-weekly-article-50-years-later-a-powerful-reminder/>).

²⁶ **Naslian J.**, *Les mémoires de Mgr. Jean Naslian, Évêque de Trébizonde, sur les événements politico-religieux en Proche-Orient de 1914 à 1928*, 2 vols, Vienna, 1955. Նույնի հայերեն տարբերակը՝ «*Տրապիզոնի Թեմի Վիճակաւոր Յովհաննէս Արք. Նազլեանի Յուշերը Մերձաւոր Արևելքի 1914-1928 շրջանի քաղաքական-կրօնական դէպքերուն մասին*», Ա. Հտր., Բ. տիպ, թրգմ. դոկտ. Հմայեակ Ստեփանեան, Պէրիոթ, 1960.

²⁷ **Korey W.**, *An Epitaph for Raphael Lemkin*, New York, 2001.

²⁸ **Power S.**, *"A Problem from Hell": America and the Age of Genocide*, New York, 2002.

²⁹ **Cooper J.**, *"Raphael Lemkin and the Struggle for the Genocide convention"*, New York, 2008.

³⁰ **Jacobs S. L.**, "The Human, the Humane, and the Humanitarian: Their Implications and Consequences in Raphael Lemkin's Work on Genocide", in *"Rafał Lemkin: A Hero of Humankind"* ed. by Agnieszka Bienczyk-Missala and Sławomir Debski, Warsaw, **Jacobs S. L.**, "The Papers of Raphael Lemkin: A first look", *Journal of Genocide Research*, 1999, vol 1, no 1, pp. 105-114.

վերլուծվում են Հայոց ցեղասպանության խնդրի վերաբերյալ երկու առանցքային հետազոտությունները «Հայերի կոտորածների մասին գրքաչափ ձեռագիրը» և «Հայերի կոտորածների մասին համառոտ ձեռագիրը»³¹: Լեմկինի արխիվային փաստաթղթերի մասին Ջեկոբսը ուշագրավ տեղեկություններ է տրամադրում «Ռաֆայել Լեմկինի թղթերը՝ առաջին հայացքից» հոդվածում³²: Պրոֆեսոր Սթիվեն Ջեկոբսը հրապարակել է նաև Լեմկինի կողմից անավարտ մնացած ցեղասպանության պատմության անտիկ, միջնադարյան և ժամանակակից փուլի մի քանի դեպքերի վերաբերող նրա հետազոտությունները (Հայոց ցեղասպանության հատվածը ներառված չէ) և նրա «Ցեղասպանության ուսումնասիրության ներածություն» վերնագրով անտիպ ձեռագիրը³³:

Սույն առենախոսության մեջ օգտագործվել են նաև Ամերիկայի հրեական պատմական ընկերակցության արխիվի աշխատակից Տանյա Էլդերի³⁴ աշխատանքը, որը շատ արժեքավոր տեղեկություններ է տրամադրում Լեմկինի արխիվային փաստաթղթերի տեղակայության և բովանդակության վերաբերյալ: Լեմկինի գիտական գործունեության մասին հավելյալ տեղեկություններ ստանալու համար օգտվել ենք թեմային առնչվող ժամանակակից արժեքավոր գիտական գրականությունից: Հատկապես կարևոր են Վիլյամ Շաբասի³⁵, Փոլ Բարտրոպի³⁶, Ջեյմս Մարտինի³⁷, Դեն Էշետի³⁸, Հիրադ Արզահու և Ֆիլիպա

³¹ **Jacobs. S.L.**, “Raphael Lemkin and the Armenian Genocide,” in *Looking Backward, Moving Forward: Confronting the Armenian Genocide*, ed. Richard G. Hovannisian, New Brunswick, 2003, pp. 125-135.

³² **Jacobs S. L.**, “The papers of Raphael Lemkin: A first look”, *Journal of Genocide Research*, 1999, vol 1, no 1, pp. 105-114.

³³ Տե՛ս **Lemkin R.**, *Lemkin on Genocide*, ed. by Jacobs S. L., Lanham, 2012.

³⁴ **Elder T.**, “What you see before your eyes: documenting Raphael Lemkin’s life by exploring his archival Papers, 1900–1959”, *Journal of Genocide Research*, 2005, vol. 7, no. 4, pp. 469–499.

³⁵ **Schabas W.**, “Genocide in International Law: The Crimes of Crimes”, Cambridge, 2000,

³⁶ **Bartrop P.**, *A Biographical Encyclopedia of Contemporary Genocide: Portraits of Evil and Good*, Santa Barbara, 2012; **Bartrop P. R, Jacobs S.L.**, *Fifty Key Thinkers on the Holocaust and Genocide*, London and New York, 2011.

³⁷ **Martin J.**, *The Man Who Invented “Genocide”: The Public Career and Consequences of Raphael Lemkin*, Torrance, 1984.

³⁸ **Eshet D.**, *Totally Unofficial: Raphael Lemkin and the Genocide Convention*, Brookline, 2007.

Վերի³⁹, Թաներ Աքչամի⁴⁰, Դիրկ Մոսեսի⁴¹ աշխատությունները:

Հայոց ցեղասպանությանը վերաբերող տարբեր պնդումներ փաստարկելու և դրանց լեմկինյան անդրադարձերն ավելի համակողմանի հասկանալու համար լայնորեն օգտագործել ենք Հայկական հարցի և Մեծ եղեռնի մի շարք կարևոր սկզբնաղբյուրներ, որոնցից ժամանակին օգտվել է նաև Ռաֆայել Լեմկինը: Դրանց դիտարկումը հնարավորություն է տվել ավելի համակողմանի ըմբռնել Ռ. Լեմկինի՝ պատմական իրողությունները հասկանալու յուրահատկությունները:

Հայ հեղինակներից ատենախոսության թեմային առնչվող հետազոտություններ են կատարել Յուրի Բարսեղովը⁴², Շավարշ Թորիկյանը⁴³, Վահագն Դադրյանը⁴⁴, Փիթեր Բալաքյանը,⁴⁵ Ռուբեն Սաֆրաստյանը,⁴⁶ Արմեն Մարուքյանը,⁴⁷ Վլադիմիր Վարդանյանը,⁴⁸ Նիկոլայ Հովհաննիսյանը,⁴⁹ Ռոդնի

³⁹ **Abtahi H., Webb P.**, *The Genocide Convention: The Travaux Préparatoires*, Leiden-Boston, 2008.

⁴⁰ **Akçam T.**, *The Young Turks' Crime against Humanity: The Armenian Genocide and Ethnic Cleansing in the Ottoman Empire*, Princeton, 2012; Աքչամ Թ., Հայերի բռնի իսլամացումը. լռություն, ժխտում և ուժացում, Երևան, 2016:

⁴¹ **Moses D.**, “Empire, Colony, Genocide: Keywords and the Philosophy of History”, in Moses D. (ed.), *Empire, Colony, Genocide: Conquest, Occupation, and Subaltern Resistance in World History*, New York and Oxford, 2008, pp. 3-54; **Moses D.**, “Raphael Lemkin, Culture, and the Concept of Genocide,” in Bloxham D. and A. Moses D. eds., *The Oxford Handbook of Genocide Studies*, 2010, New York, pp. 19-41.

⁴² **Барцеров Ю.**, *Геноцид армян-преступление по международному праву*, Москва, 2000.

⁴³ **Թորիկյան Շ.**, Հայկական հարցը և միջազգային օրէնքը, Պէյրուս, 1976::

⁴⁴ **Dadrian V.**, *The Key Elements in the Turkish Denial of the Armenian Genocide: A case study of distortion and falsification*, Cambridge, MA and Toronto, 1999.

⁴⁵ **Balakian P.**, “Raphael Lemkin, Cultural Destruction, and the Armenian Genocide”, *Holocaust Genocide Studies*, 2013, vol. 27, no 1, pp. 57-89.

⁴⁶ **Սաֆրաստյան Ռ.**, Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.), Երևան, 2009:

⁴⁷ **Մարուքյան Ա.**, Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները, Երևան, 2014:

⁴⁸ **Վարդանյան Վ.**, Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման և հետևանքների վերացման իրավական հիմնախնդիրները, Երևան, 2017:

⁴⁹ **Հովհաննիսյան Ն.**, Արմենոցիդը ճանաչված ցեղասպանություն է, Երևան, 2010:

Դաքեայանը⁵⁰, Աշոտ Մելքոնյանը⁵¹: Ցեղասպանության կոնվենցիայի Ռաֆայել Լեմկինի նախագծի և 1948 թ. դեկտեմբերի 9-ի ՄԱԿ-ի կոնվենցիայի տեքստը լեզվաբանական և լեզվաոճական վերլուծության են ենթարկել Ս. Գասպարյանի, Շ. Պարոնյանը, Ա. Չոբարյանը, Գ. Մուրադյանը իրենց համահեղինակած գրքում⁵²:

Թեմայի հետազոտման համար ուշադրության ենք արժանացրել նաև մամուլի հրապարակումները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ ԵՎ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ:

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են ատենախոսության գիտական նորույթն ու կիրառական նշանակությունը, նպատակն ու խնդիրները, տրվել են հիմնախնդրին վերաբերող սկզբնաղբյուրներն ու գրականության տեսությունը:

Առաջին գլուխը՝ «Հայոց ցեղասպանության խնդիրը և Ռաֆայել Լեմկինի գիտական գործունեությունը», բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Հայոց ցեղասպանության ազդեցությունը Ռաֆայել Լեմկինի ուսումնասիրությունների վրա», խոսվում է վաղ տարիքից տարատեսակ ջարդերի և ցեղասպանությունների պատմության նկատմամբ հեղինակի հետաքրքրության մասին: Վերջինիս գիտակցության մեջ մեծ տպավորություն էին թողել հատկապես Օսմանյան կայսրությունում հայերի զանգվածային սպանությունները: Իսկ Լվովի համալսարանում իր ուսանելու տարիներին նրա կյանքում շրջադարձային եղավ Թեհլիրյանի դատավարությունը, որի շուրջ իր պրոֆեսորի հետ ունեցած քննարկումից հետո նա սկսում է իր գիտական գործունեությունը՝ միտված «ցեղասպանություն» հանցագործության մեղավորներին պատժելու մեխանիզմների ստեղծմանը:

Երկրորդ ենթագլխում՝ ««Ցեղասպանություն» եզրույթի ստեղծումը և Հայոց ցեղասպանության խնդիրը», ներկայացվում են Ռաֆայել Լեմկինի փնտրտուքները «ցեղասպանություն» հանցագործությունը բնորոշելու գործում համապատասխան եզրույթ գտնելու համար: 1944 թ. հրապարակված «Առանցքի տերությունների կառավարումը բռնազավթված Եվրոպայում»

⁵⁰ **Դաքեայան Ռ.**, 1915 թ. հայերի դեմ իրագործված կոտորածների իրավաբանական հետևանքները և դրանց լուծման դատական ու արդարադատական հնարավոր եղանակները, Երևան, 2015:

⁵¹ **Մելքոնյան Ա.**, «Հայրենագրվում» եզրույթի իրավական ձևակերպման անհրաժեշտությունը, Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և պատասխանատվության միջազգային իրավական հիմնախնդիրները, գիտաժողովի նյութեր, Երևան, 22 ապրիլի 2015, էջ 33-43:

⁵² **Gasparyan S., Paronyan Sh., Chubaryan A., Muradyan G.**, Raphael Lemkin's Draft Convention on Genocide and the 1948 UN Convention: a Comparative Discourse Study, Yerevan, 2016.

աշխատության մեջ նա ստեղծեց «Genocide» («ցեղասպանություն») եզրույթը հունական «genos» (ուսա, ցեղ) և լատիներեն «cide» (սպանել) բառերից: Իր հետագա ուսումնասիրություններում «ցեղասպանություն» հանցագործության էությունը բնորոշելու հարցում Լեմկինը պատմության ընթացքում տեղի ունեցած ցեղասպանությունների շարքում առանձնահատուկ տեղ է հատկացնում Հայոց ցեղասպանությանը՝ որպես ցեղասպանության իրագործման նախավերջին օրինակ:

Երրորդ ենթագլխում՝ ««Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին» 1948 թ. դեկտեմբերի 9-ի կոնվենցիայի ընդունումը և Հայոց ցեղասպանության խնդիրը», ներկայացվում է Նյուրնբերգի դատավարությունից հետո Լեմկինի գործադրած ջանքերը ցեղասպանությունը դատապարտող միջազգային փաստաթղթի ստեղծման գործում, որի արդյունքում ի վերջո 1948 թ. դեկտեմբերի 9-ին ընդունվում է «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիան: Կոնվենցիայի ընդունումը Լեմկինն իր աշխատանքներում կարևորում էր Հայոց ցեղասպանության օրինակով ցեղասպանությունն իրագործած հանցագործների անպատիժ մնալու հնարավորությունը բացառելու տեսանկյունից:

Երկրորդ գլուխը՝ «Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության հարցերի քննարկումը Ռ. Լեմկինի անտիպ ձեռագրերում» բաղկացած է վեց ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Ռաֆայել Լեմկինի անտիպ գործերի աղբյուրագիտական և պատմագրական հենքը», ամփոփ տեղեկություններ են տրամադրվում արխիվների մասին՝ Ամերիկյան հրեական արխիվի Ջեկոբ Ռեյդեր Մարկուս կենտրոն, Ամերիկայի Հրեական պատմական ընկերակցություն, Նյու Յորքի հանրային գրադարանի արխիվների և ձեռագրերի բաժին, որոնցում ընդգրկված են Լեմկինի փաստաթղթերը, նամակագրությունները, ձեռագրերը, լուսանկարները և այլն: Լեմկինի աշխատանքներում առանձնանում են նաև ցեղասպանության պատմության վերաբերյալ հետազոտությունները, որոնք նա նախատեսել էր հրապարակել երեք հատորանոց «Ցեղասպանության պատմություն» աշխատության տեսքով, որը մնաց անկատար: Այս աշխատության երրորդ հատորի 39-րդ գլուխը վերաբերելու էր Հայոց ցեղասպանությանը: Ամերիկայի Հրեական պատմական ընկերակցության Ռաֆայել Լեմկինի հավաքածուում պահպանված կարևոր նյութեր են նաև Հայոց ցեղասպանությանը վերաբերող ամսագրերը և գրքուկները, որոնցից օգտվել է Լեմկինը:

Երկրորդ ենթագլխում՝ «Հայկական հարցը (ծագումից մինչև Ադանայի կոտորածներ) Ռաֆայել Լեմկինի «Հայերի կոտորածների մասին գրքաչափ ձեռագրում», վեր է հանվում Ռաֆայել Լեմկինի գիտական ժառանգության մեջ առանձնակի կարևորություն ունեցող «Հայերի

կոտորածների մասին գրքաչափ ձեռագիր» անունը կրող աշխատանքը՝ որպես նրա գիտական գործունեության մեջ Հայոց ցեղասպանության ունեցած մեծ ազդեցությունը փաստող աշխատանք: Վերլուծել ենք այս աշխատության աղբյուրագիտական հենքը, ներկայացրել ձեռագրում տեղ գտած հայոց պատմության առանձնահատկության վերաբերյալ Լեմկինի ընկալումները, Հայկական հարցի ծագումը և մեծ տերությունների դիրքորոշման լեմկինյան գնահատականը, ինչպես նաև նրա անդրադարձը 1890-ական թթ. և 1909 թ. Ադանայի կոտորածներին:

Երրորդ ենթագլուխը՝ «Դիտարկումներ Գրքաչափ ձեռագրի «Սպանելու մտադրություն. ո՞վ է մեղավոր» ենթաբաժնում», նվիրված է «Հայերի կոտորածների մասին գրքաչափ ձեռագիր» «Սպանելու մտադրություն. ո՞վ է մեղավոր» ենթաբաժնի վերլուծությանը, որում հեղինակն անդրադարձել է ինչպես Հայոց ցեղասպանության իրագործման դրդապատճառներին, այնպես էլ Հայոց ցեղասպանության իրագործման պատասխանատվության խնդրին: Լեմկինը փորձել է ապացուցել Օսմանյան կայսրությունում հայերին ոչնչացնելու մտադրության առկայությունը: Նա հատուկ ընդգծում է, որ Գերմանիան թեև հնարավորություն ուներ կանխելու թուրքական իշխանությունների կողմից իրականացված վայրագությունները, սակայն դրա փոխարեն նախընտրեց խրախուսել հայերի կոտորածների իրագործումը: Ոչնչացման ծրագիրը իրականացվեց թուրքական կառավարության կողմից Գերմանիայի կողմից աջակցության պայմաններում:

Չորրորդ ենթագլուխը՝ «Ռաֆայել Լեմկինի գիտական մոտեցումները 1915-1916 թթ. Օսմանյան կայսրությունում հայերի կոտորածների ընթացքի մասին», ներկայացվում է Լեմկինի կողմից «Հայերի կոտորածների վերաբերյալ գրքաչափ ձեռագրում» և այլ աշխատություններում 1915-1916 թթ. Օսմանյան կայսրությունում հայերի ոչնչացման ծրագրի իրականացման ընթացքի նկարագրությանը: Հեղինակը նախ անդրադառնում է Հայոց ցեղասպանությանը նախորդող դեպքերին, ապա ներկայացնում, որ թուրքերը բանակ զորակոչված հայ զինվորներին կոտորելուց հետո անցնում էին հայ աշխատունակ տղամարդկանց ոչնչացմանը, որին հետևում էր հայ կանանց, երեխաների, ծերերի և հիվանդների աքսորը: Նա շրջանցում է մտավորականների ձերբակալությունն ու ոչնչացումը: Իսկ 1959 թ. Տրապիզոնի թեմի առաջնորդ, արքեպիսկոպոս Հովհաննես Նազլյանի հուշերի մասին «Հայրենիք» շաբաթաթերթում տպագրված իր գրախոսությունում հայ մտավորականների՝ Կոստանդնուպոլսից արտաքսումը և սպանությունը համարում է որպես ցեղասպանության առաջին չարագուշակ նշանը: Լեմկինը ներկայացվում է թուրքերի կողմից հայերի ունեցվածքի յուրացումը, ինչպես նաև փաստեր է ներկայացնում Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ իրականացվող մշակութային ցեղասպանության մասին:

Հինգերորդ ենթագլխում՝ «Ռաֆայել Լեմկինի «Հայերի կոտորածների մասին համառոտ ձեռագիրը»», վերլուծվում է Ռաֆայել Լեմկինի «Հայերի կոտորածների մասին համառոտ ձեռագիր» խորագիրը կրող աշխատանքը: Լեմկինն այս աշխատանքում, օգտագործելով Հայոց ցեղասպանության մասին մի շարք վկայություններ և փաստեր, հատուկ ուշադրություն է դարձրել Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ իրականացվող աննախադեպ վայրագությունների և կրոնափոխության քաղաքականությանը: Լեմկինն անդրադարձել է նաև հայոց եկեղեցու՝ հայ ժողովրդի կյանքում ունեցած պատմական դերակատարությանը:

Վեցերորդ ենթագլխում՝ «Հայոց ցեղասպանության խնդիրը Ռաֆայել Լեմկինի «Վերջ տալ ցեղասպանությանն այժմ» հոդվածում», վերլուծվում է Լեմկինի գրչին պատկանող՝ «Վերջ տալ ցեղասպանությանն այժմ» (Stop Genocide Now) խորագիրը կրող հոդվածը, որում նա ներկայացնում է կարևոր դիտարկումներ «ցեղասպանություն» երևույթի բնույթի և էության շուրջ: Ենթադրվում է, որ Լեմկինն այն գրել է 1947 թ. երկրորդ կեսին, երբ «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի նախագիծը քննարկման փուլում էր: Իրավաբանը կարևորում է պահը բաց չթողնելու և ցեղասպանության կանխարգելման ու պատժի համար համապատասխան մեխանիզմի ընդունման անհետաձգելիության հարցը: Նա փաստում է, որ միջազգային հանրությունն այն ժամանակ հետամուտ չեղավ հասնելու Հայոց ցեղասպանության պատասխանատուներին պատժելուն առնչվող խոստումների իրականացմանը, ուստի դա չի նշանակում, որ կարելի է մոռանալ այս մասին: Նրա համոզմամբ՝ ցեղասպանությունների իրագործումը չպետք է թողնել անպատիժ:

Երրորդ գլուխը՝ «Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության որոշ խնդիրների քննությունը Լեմկինի և նրա օգնականների աշխատանքներում», բաղկացած է երեք ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում՝ «Հայերի պաշտպանության համար «Մարդասիրական միջամտությունների» քննությունը Ռաֆայել Լեմկինի գործերում», ներկայացվում է «մարդասիրական միջամտություն» հասկացությունը: Ի ցույց է դրվում, որ պետության ինքնիշխանության սահմանափակման և փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության, մարդասիրական միջամտությունների հարցերը եղել են հետազոտողի գիտական հետաքրքրության շրջանակում: Նա իր անտիպ նյութերում տարբեր երկրներում տեղի ունեցած մարդասիրական միջամտությունների հետ մեկտեղ փաստեր է ներկայացրել Օսմանյան կայսրությունում ի պաշտպանություն հայերի իրականացված միջամտությունների մասին՝ ցույց տալով, որ եվրոպական երկրների միջամտությունները այդպես էլ հայերի համար տեսանելի արդյունք չունեցան:

Երկրորդ ենթագլխում՝ «Հայոց ցեղասպանության խնդիրը Լեմկինի օգնականների հետազոտական գրառումներում», վեր են հանվում Հայոց ցեղասպանության խնդրի վերաբերյալ Ռաֆայել Լեմկինի օգնականների հետազոտական գրառումները: Նրանց աշխատանքներում անդրադարձ է կատարվում Հայկական հարցի ասպարեզ իջնելուն և դրա շուրջ մեծ տերությունների ծավալվող հակասություններին, հայերի դեմ ուղղված թուրքական կեղծ քարոզչությանը, ինչպես նաև հայերի զանգվածային տեղահանություններին և Հայոց ցեղասպանության հետ կապված այլ խնդիրների: Հետազոտական գրառումներում նշվում է, որ երիտթուրքերը պատասխանատու են ցեղասպանության համար, իսկ Գերմանիան հրահրել է ցեղասպանության իրականացումը:

Երրորդ ենթագլխում՝ Ռ. Լեմկինի ցեղասպանագիտական ուսումնասիրությունները՝ որպես կովան Հայոց ցեղասպանության ժխտողականության դեմ, վերլուծվում է Հայոց ցեղասպանությունը ժխտող հեղինակների մոտեցումները Ռաֆայել Լեմկինի գործունեության և նրա գիտական ժառանգության վերաբերյալ, որոնցում փորձ է կատարվում նենգափոխել ու ծուռ հայելու միջոցով ներկայացնել այդ թեմայի բացառիկ նշանակությունը նրա համար: Փաստերի հիման վրա ցույց են տրվում ժխտողական հեղինակների առաջ քաշած թեզերի կեղծ լինելը և Հայոց ցեղասպանության խնդրի ունեցած առանձնակի կարևորությունը Ռաֆայել Լեմկինի գիտական գործունեության և ժառանգության մեջ:

Ատենախոսությունն ավարտվում է եզրակացությամբ, որտեղ ամփոփված են աշխատանքի հիմնական արդյունքները:

1. Ռաֆայել Լեմկինը դեռ մանկուց հետաքրքրվել է պատմության ընթացքում տեղի ունեցած տարատեսակ կոտորածների և ցեղասպանությունների պատմությամբ, սակայն միջազգային քրեական իրավունքի ուսումնասիրությամբ զբաղվելու համար նրա կյանքում խթան է դարձել Հայոց ցեղասպանությունը: Թուրք հանցագործների անպատիժ մնալու հանգամանքը նրա մոտ առաջացրել է նմանատիպ հանցագործներին պատժելու մեխանիզմների ստեղծման անհրաժեշտության գիտակցում:
2. Հայոց ցեղասպանության իրագործման ժամանակ Ռաֆայել Լեմկինը բարձրաձայնում էր ժամանակի միջազգային իրավունքի անկատար լինելու հարցը: Միջազգային քրեական իրավունքի հարցերին նվիրված 1933թ. Մադրիդի կոնֆերանսում իրավաբանը ներկայացրել է իր զեկույցը՝ ելնելով Հայոց ցեղասպանության տրամաբանությունից, այսինքն՝ նա զգուշացնում էր, որ Հայոց ցեղասպանությունն հանցագործության նկատմամբ անտարբերությունը և անպատժելիությունը կարող է հանգեցնել այդ հանցագործություն

կրկնությանը, ինչը և տեղի ունեցավ Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ:

3. 1933 թ. Մադրիդի կոնֆերանսում Լեմկինի՝ «Բարբարոսություն» և «վանդալիզմ» հանցագործությունների վերաբերյալ առաջարկների մերժումը հիմքեր ստեղծեց, որպեսզի Ռ. Լեմկինը շարունակի իր պայքարը ցեղասպանություն հանցագործությունը կանխարգելելու ուղղությամբ: 1944 թ. «Առանցքի տերությունների կառավարումը բռնազավթված Եվրոպայում» աշխատության մեջ «ցեղասպանություն» եզրույթի ստեղծումը նրա կողմից կարելի է համարել 1933 թ. առաջարկների տրամաբանական զարգացումը:
4. «Ցեղասպանություն» եզրույթը ստեղծելու փնտրտուքի ժամանակ Ռաֆայել Լեմկինը անբավարար համարեց բոլոր այն եզրույթները, որոնք մինչ այդ գոյություն ունեին և թերի էին ցեղասպանության բնորոշումը տալու հարցում: Ցեղասպանության հանցագործության էությունը բնորոշելու հարցում նա պատմության ընթացքում տեղի ունեցած ցեղասպանությունների շարքում առանձնակի նշանակություն է տալիս Հայոց ցեղասպանության իրագործմանը:
5. «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին» 1948 թ. դեկտեմբերի 9-ի կոնվենցիայի ընդունման անհրաժեշտությունը Ռաֆայել Լեմկինը կարևորում էր Հայոց ցեղասպանության օրինակով հանցագործներին անպատիժ թողնելու հնարավորությունը բացառելու տեսանկյունից: Ըստ նրա՝ կոնվենցիայի բացակայությունն էր, որ թույլ տվեց երիտթուրք ոճրագործներին խույս տալ պատժից, իսկ նրանց պատժելու գործը իրականացրին հայ երիտասարդ վրիժառուները: Կոնվենցիայի ստեղծման համար Լեմկինի պայքարը ի վերջո հաջողություն ունեցավ:
6. Ռ. Լեմկինը փաստում էր, որ միջազգային հանրությունը հետամուտ չեղավ հասնելու Հայոց ցեղասպանության պատասխանատուներին պատժելուն առնչվող խոստումների իրականացմանը, սակայն դա չի նշանակում, որ կարելի է մոռանալ այդ մասին: Նրա համոզմամբ՝ Հայոց ցեղասպանության և ընդհանրապես ցեղասպանությունների իրագործումը չպետք է թողնել անպատիժ:
7. «Հայերի կոտորածների մասին գրքաչափ ձեռագրում» Լեմկինը Հայկական հարցի միջազգայնացումը գնահատում է որպես Օսմանյան կայսրության տարածքում հայերի դրությունը բարելավելու փորձ, որը ոչ միայն արդյունք չունեցավ, այլ նաև նպաստեց, որ հայերին ոչնչացնելու ծրագրերը Օսմանյան կայսրությունը դարձնի նպատակաուղղված քաղաքականություն: 1909 թ. Ադանայի կոտորածը նա դիտարկում է որպես մի քանի տարի հետո սպասվող զանգվածային

տեղահանությունների և կոտորածների կազմակերպման համար կարևոր ահազանք:

8. Գրքաչափ ձեռագրի «Սպանելու մտադրություն. ո՞վ է մեղավոր» ենթաբաժնում Լեմկին Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ կիրառվող հալածանքները պայմանավորում է գլխավորապես կրոնական դրդապատճառներով: Նրա կարծիքով՝ Օսմանյան կայսրության կողմից Հայոց ցեղասպանության իրագործումը տեղի է ունեցել Գերմանիայի մեղսակցության և աջակցության պայմաններում: Փաստերի հիման վրա Լեմկինը ցույց է տալիս, որ Օսմանյան կայսրությունում հայերի բնաջնջումը մշակված և համակարգված գործընթաց էր, առկա էր հայերին ոչնչացնելու մտադրությունը:
9. Ռ. Լեմկինը փորձում է ի ցույց դնել, որ ցեղասպանության իրագործման համար պատրվակ դարձան հայերի՝ ապստամբություններ բարձրացնելու վերաբերյալ կեղծ լուրերը: Նկարագրելով թուրքերի կողմից հայերի ոչնչացման ծրագրի իրականացումը՝ նա ուշադրություն է հրավիրել հայերի մշակութային արժեքների ոչնչացմանը՝ մշակութային ցեղասպանությանը:
10. «Հայերի կոտորածների մասին համառոտ ձեռագրում» Լեմկինը, ներկայացնելով Հայոց ցեղասպանության մասին վկայություններ և փաստեր, հատուկ ուշադրություն է դարձրել Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ իրականացվող աննախադեպ վայրագությունների և կրոնափոխության քաղաքականությանը:
11. Վերլուծելով մարդասիրական միջամտությունների տարբեր օրինակներ՝ Լեմկինը ընդգծել է, որ Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ հալածանքները և նրանց իրավունքների ոտնահարումը շարունակական էին, որի մասին են վկայում նաև հայերի վիճակի բարելավման մասին եվրոպական երկրների հորդորների անտեսումը օսմանյան իշխանությունների կողմից:
12. Լեմկինի օգնականների հետազոտական գրառումները, որոնցում քննարկվում են Հայկական հարցի միջազգային ասպարեզ մտնելը և Օսմանյան կայսրությունում հայերի կոտորածները, կրում են Լեմկինի մոտեցումների ազդեցությունը: Այս հետազոտական գրառումները ևս փաստում են Հայոց ցեղասպանության խնդրին Լեմկինի կողմից տրված մեծ կարևորությունը:
13. Թուրքական պետության կողմից իրականացվող ժխտողական քաղաքականությունը փորձում է Հայոց ցեղասպանության պատմական իրողությունը կեղծող փաստարկների միջոցով գլխիվայր ներկայացնել Լեմկինի գործունեությունը: Հայոց ցեղասպանության վերաբերյալ նրա հետազոտությունները բացահայտում են ժխտողականների փաստարկների սնանկությունը:

Ատենախոսության հիմնական բովանդակությունն արտացոլված է հեղինակի հետևյալ հոդվածներում.

1. Հայոց ցեղասպանության թեման Ռաֆայել Լեմկինի գործունեության սկզբնական շրջանում, *Ցեղասպանագիտական հանդես*, 2014, № 2 (2), էջ 156-163:
2. Ռաֆայել Լեմկինի «Հայկական կոտորածների մասին համառոտ ձեռագիրը», *Ցեղասպանագիտական հանդես*, 2015, № 3 (1-2), էջ 300-306:
3. Հայկական հարցը, 1890-ական թթ. ջարդերը և 1909 թ. Ադանայի կոտորածը Ռաֆայել Լեմկինի «Հայկական կոտորածների վերաբերյալ գրքաչափ ձեռագրում», *Ցեղասպանագիտական հանդես*, 2016, № 4 (1), էջ 187-202:
4. Ռաֆայել Լեմկինի դիտարկումները հայկական կոտորածների վերաբերյալ գրքաչափ (book-length) ձեռագրի «Սպանելու մտադրություն: Ո՞վ է մեղավոր» ենթաբաժնում», *Ցեղասպանագիտական հանդես*, 2016, № 4 (2), էջ 118-128:
5. Ռաֆայել Լեմկինի կողմից «Ցեղասպանություն» եզրույթի ստեղծումը և Հայոց ցեղասպանությունը, *Օրինականություն*, 2016, № 96, էջ 31-39:
6. Հայոց ցեղասպանության թեման Ռաֆայել Լեմկինի «Վերջ տալ ցեղասպանությանն այժմ» հոդվածում, *Հայագիտության հարցեր*, 2016, № 3 (9), էջ 68-72:
7. «Հումանիտար ինտերվենցիայի» հասկացությունը և հայերի պաշտպանության համար ինտերվենցիաները Ռաֆայել Լեմկինի գործերում, *Հայագիտության հարցեր*, 2017, № (1)10, էջ 75-86:

ПОГОСЯН НАРЕК МАРАТОВИЧ

ИССЛЕДОВАНИЕ ПРОБЛЕМЫ ГЕНОЦИДА АРМЯН РАФАЭЛЕМ ЛЕМКИНЫМ

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.05 “Историография, источниковедение”.

Защита состоится 18-го июля, 2017 г. в 12⁰⁰, на заседании специализированного совета Истории Армении 004 ВАК РА при Институте Истории Национальной Академии Наук РА (0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4).

РЕЗЮМЕ

Тема Геноцида армян занимает особое место в научном наследии юриста Рафаэля Лемкина, который внес большой вклад в дело формирования и развития геноцидологии – как отдельной научной дисциплины.

Рафаэль Лемкин еще с детства интересовался случаями геноцидов, имевшими место в истории человечества. Сведения о массовых убийствах армян и факты безнаказанности турецких преступников оказали большое влияние на научную деятельность Лемкина. Рассматривая необходимость создания механизмов наказания организаторов преступлений подобных Геноциду армян, Лемкин начал изучать международное уголовное право и говорить о его несовершенстве.

После отклонения представленных им на Мадридской конференции 1933 года предложений, Лемкин продолжил свою борьбу, направленную на предупреждение преступления геноцида. В опубликованной в 1944 году работе «Правление государств „Оси“ в Оккупированной Европе» Лемкин ввел в научный оборот термин «геноцид».

После создания данного термина он направил свои усилия на создание международного юридического документа, осуждающего геноцид. Принятию 9-го декабря 1948 года Организацией Объединенных Наций «Конвенции о предупреждении преступления геноцида и наказании за него» Лемкин придавал важность также с точки зрения исключения возможности оставаться безнаказанными преступникам, осуществившим геноциды по примеру Геноцида армян.

Изучение «Рукописи книжного формата о резне армян» Рафаэля Лемкина, позволяет выявить, что автор уделяет особое внимание географическому местоположению Армении, факту христианского

вероисповедания армян и роли Армянской апостольской церкви в деле сохранения армянства. Исследователь подчеркивает тот факт, что меры европейских держав, направленные на предотвращение геноцида армян, были недостаточны. Аданские погромы 1909 года Лемкин рассматривает как важный тревожный провозвестник депортации и резни, имевших место несколько лет спустя. На основе фактов Лемкин показывает, что правительство Османской империи осуществило Геноцид армян в условиях сообщничества и поддержки Германии. В «Краткой рукописи о резне армян» Лемкин, представляя сведения и факты Армянского геноцида, особое внимание уделяет беспрецедентно варварским методам резни, которые использовались в отношении армян.

Опасения Лемкина относительно беспрепятственного осуществления геноцида, отражены в его архиве. Его подходы также нашли отражение в научных материалах его помощников, в которых также уделено особое внимание возникновению Армянского вопроса и другим вопросам, которые относятся к теме Геноцида армян.

В последнее время в центре внимания авторов, отрицающих Геноцид армян, оказалось научное наследие Рафаэля Лемкина. Политика отрицания, поощряющаяся турецкими властями, направлена на искажение деятельности Лемкина посредством ложных тезисов, попытку всеми средствами «отдалить» факт Геноцида армян от наследия Р. Лемкина, а также исключить любую связь Геноцида армян с понятием «геноцид». Исследования Лемкина по теме Геноцида армян выявляют ошибочность аргументов отрицателей.

POGHOSYAN NAREK MARAT

THE STUDY OF THE ARMENIAN GENOCIDE BY RAPHAEL LEMKIN

Dissertation for the degree of the Doctor of History on the specialization of
“Historiography, sources study” 07.00.05

The defense of the dissertation will be held on July 18, 2017, 12⁰⁰ at the session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan Ave 24/4).

SUMMARY

Lawyer Raphael Lemkin, who made a great contribution to the formation and development of genocide studies as a separate field of research, has made special emphasis on the study of the problem of the Armenian Genocide in his scientific heritage. In the thesis, the importance of the Armenian Genocide issue in Raphael Lemkin's scholarly works is thoroughly studied and analyzed.

Raphael Lemkin had been interested in studying the history of mass murder and genocide since childhood. However, the information about the Armenian massacres and the facts of impunity of the perpetrators had a great impact on the scholarly activities of Lemkin. Realizing the need of creating mechanisms to punish such criminals, Lemkin began to study international criminal law and talk about its imperfection.

Lemkin attended the law conference in Madrid in 1933 and presented his report on the mass killings of the Armenians. He warned that the impunity and indifference towards the Armenian Genocide might result in new genocides, like Jewish Holocaust in Nazi Germany during the Second World War.

After the refusal of his proposals in Madrid Conference in 1933, Lemkin continued his struggle aimed at preventing the crime of genocide. Lemkin understood that all existing terms which describe mass murder are imperfect. In 1944 Lemkin published a book titled “Axis Rule in Occupied Europe”, in which he created the term “*Genocide*”. After creation of the new term, he fully focused his efforts on the creation of an international document condemning the genocide.

According to Lemkin, The adoption of “The Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide” on December 9, 1948 by United Nation General Assembly was an important step towards the exclusion the possibility of

impunity of the genocide perpetrators based on the example of the Armenian Genocide.

The examination of Lemkin's most important work on the Armenian Genocide ("Book-Length Manuscript on the Armenian Massacres") gives us an opportunity to conclude that Lemkin has highlighted the geographical location of Armenia, the fact of being Christians and the role of the Armenian Apostolic Church in the historical fate of the Armenian people. At the same time, he has stressed the fact that the steps of the European powers to prevent genocide were not sufficient. He considers Adana massacres of 1909 as an important sign for the organization of forthcoming deportation and massacres. Based on the facts, Lemkin shows that the implementation of the Armenian Genocide in the Ottoman Empire was carried out in cooperation and support of Germany. In "Short Manuscript on the Turkish Massacre of Armenians" Lemkin, presenting the facts and testimonies about the Armenian massacres, has paid special attention to the policy of unprecedented atrocity against the Armenians and forced conversion into Islam.

In his researches devoted to the protection of minorities, Lemkin examines various cases of humanitarian interventions and states that despite all these interventions, the violations of rights of the Armenian minorities in the Ottoman Empire were ceaseless.

Lemkin's concern about unimpeded implementation of the Armenian genocide has been reflected in his archival documents. His approaches have even been reflected in the scholarly materials of his assistants. In these works, there are many specific references to the emergence of the Armenian Question, the policy of the Great Powers, as well as various aspects of the Ottoman genocide against the Armenians.

Recently, the scientific heritage of Raphael Lemkin has become the focus of the authors who deny the genocide. The Turkish denialist policy is aimed at distorting Lemkin's activities, through false theses, trying to "distance" the reality of the Armenian Genocide from Lemkin's legacy by all means, as well as denying Armenian massacres' connection with the concept of "genocide". However, the studies of the Armenian Genocide by Lemkin reveal that the arguments of the Armenian Genocide deniers are false.